


neglectus


renz myophyia



1908

Առեքը մանուկներին

Ա. Կ. ՈՒԼԵԱՆՈՎԱ



ԹԱՅՐԻԿԱ. ԹԱՐԳԻԿԱ

Կ. Ա. Բ. Մ Ի Ր Ի Ա Ն Ե Ա Ն

891.71.5.  
Դհ-66

Թ Ա Յ Լ Ի Ա  
ԵԼԵՔՏՐԱԿԱՐԱՎԱՐԱԿԱՆ ՕՐ. Ն ԱՐՄԵՆԻԱՆԻ ՊՈԼԻՏ. 7.  
1908

30 MAY 2011

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

891-715.

Դ-667

Կ/

Ա. Ի. ՈՒԼԵԱՆՕՎԱ

# ՆՈՐ ՄԱՅՐԻԿԱ

1689

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

Էլեքտրամարտ ՏՊ. Խ. Արշակունյաց, Պօլիս, 7.

1908

## ՆՈՐ ՄԱՅՐԻԿԱ

### I

Ո՞րքան երջանիկ է կօլեա նէժինցել...  
Ա՛խ, ինչ լաւ են ապրում այն երեխաները,  
որոնք մայր ունին: Ի՞նչ տխուր եմ ես,—ասում  
եմ շուտ շուտ, երբեմն օրեկան մի քանի ան-  
գամ...

—Դէհ հերիք է: Բան ու գործ է շինել՝  
տխուր եմ հա տխուր: Ոչ մի բանով չի  
կարողանում զբաղուել, այս ինչ տեսակ երե-  
խայ է,—վնթվնթում է պառաւ Միխայլօվ-  
նան: —Միթէ խաղալիքներ չկան: Ահա քո ձին,  
ահա տակառը, ահա արկղի մէջ հազար ու մի  
իրեր: Նստիր քեզ համար և խաղա սուս ու  
փուս, իսկ ես պէտք է գնամ խոհանոց, որպէս-  
զի ճաշը պատրաստ լինի ժամանակին:

Եւ նա գնում է խոհանոց իր մեծ հողա-  
թափերը շրմփացնելով, իսկ ես մնում եմ մե-  
նակ, բոլորովին մենակ... Ի՞նչպէս չտխրեմ: Ա-  
սում է. «Խաղա»: Բայց մեն մենակ ի՞նչպէս խա-  
զամ: Զիսնոր, է խօսք չունեմ, կօլեայի նման ու-  
նեմ նաև ջրի տակառ, մի քանի օր է, որ հայ-  
րիկս գնել է, բայց ում ծախեմ ես իմ ջուրը:

— «Ոչինչ, լաւ, այժմ գնում ենք տուն, կը-  
նո՞ց ու երեխաների մօտ»:

— «Երեկի ընծանե՞ր էք տանում նրանց»:

— «Իհարկէ, խօսք չկայ, առանց ընծաների  
ի՞նչպէս կարելի է»:

Օ՛հ, ինչքան ուրախ էի այնտեղ, ինչքան  
ուրախ: Ի՞նչ լաւ է խօսում Կոլեայի մայրը, այ-  
հայրս չի կարողանում այնպէս խօսել:

Իսկ յետոյ. «Ահա գնում է մի ծերունի,  
ուսից զցած ունի մաղախ: Է՞յ, ծերռակ, զգոյշ  
կաց: Ահա դպրոցից տուն են վազում՝ փոքրիկ  
երեխաներ: Ա՛խ, մի տղայի ականջը սառել է,  
այ տղայ, այ տղայ, շփիր ականջդ»:

Այսպէս ուրախ էինք այնտեղ: Երբ հայրս  
եկաւ ինձ տանելու, իսկի չէի ուզում՝ տուն  
գնալ: Պէտք է խնդրեմ նրան, որ ինձ այսօր տա-  
նի Կոլեայի մօտ,—կըտանի արդեօք, չգիտեմ.  
կասի—տօներին կերթանք:

Ա՛խ, ինչքան տխուր է այստեղ, ինչքան տը-  
խուր... իսկ Կոլեան ամեն օր ուրախ է: Երբ մայրը  
չի խաղում նրա հետ, հնարում է նրա համար  
որևէ հետաքրքրական խաղ. Երբ նստում է աշ-  
խատելու, պատմում է նրան հէքեաթներ,— ես  
էլ մի անգամ լսում էի, ի՞նչ հիանալի հէքեաթ էր:  
Երբ մայրը զբաղուած է, Կոլեան դարձեալ ու-  
րախ է: Նա օգնում է մօրը,—սենեակն է հա-  
ւաքում, նուշն է մաքրում, երբ մայրը կար-

կանդակ է թխում: Ա՛խ, ի՞նչ համով-հոտով են  
նրանց կարկանդակները, իսկ մեր Միխայլօվ-  
նան չի կարողանում լաւ կարկանդակներ  
պատրաստել: Եւ մայրը շարունակ խօսում է  
նրա հետ, երբ նուշը մաքրում են, մայրը պատ-  
մում է նրան, թէ ի՞նչպէս է բմնում նուշը.  
ախ, ի՞նչքան լաւ է և մաքրել և լսել... Որքան  
երջանիկ է նա, որքան երջանիկ... Նոյն իսկ  
չկայ մէկը, որի հետ զբունել կարողանայի:  
Հայրս դեռևս չի զայ ծառայութիւնից, իսկ  
Կոլեան ամեն օր զբունում է իր մօր հետ, նրա  
հետ միասին գնում է կըպակներ, օգնում է  
գնած իրերը բերելիս... Ահա երեկի հիմանը  
կերթան,—ժամի տասերկումն է, նրանք  
կերթան,—ժամի տասերկումն է, նախաճաշից յետոյ: Կո-  
դուրս են գնում միշտ նախաճաշից յետոյ: Կո-  
լեան ունի մի փոքրիկ պարկ, որ զցում է ու-  
սից: Նա ամեն ինչ գարսում է այդ պարկի  
մէջ և գնում... Ի՞նչ երջանիկ է նա: Եթէ ես  
մայր ունենայի, ես էլ լաւ կապրէի՝ կըզբունէի,  
կըխաղայի նրա հետ: Բայց մայրս վաղուց, վա-  
կանական պարկի մէջ ու գեղագիտական պարկի  
մէջ մեռել է,— ես դեռ փոքրիկ տղայ եմ ե-  
ղել, նոր-նոր ման գալ սովորող:

Հայրիկս վերադարձաւ ծառայութիւնից—  
մի տեսակ տխուր տրտում: Ես ընդ առաջ վա-  
կեցի և սկսեցի ինդրել, որ այսօր ինձ տանի  
նէժինցեների մօտ:

— Զէ, տսաց նա, այսօր չի կարելի՝ ես

շատ գործ ունեմ անելու, —և դու էլ հօ չես  
կարող շարունակ այստեղ ընկած լինել՝ կը-  
ձանձրացնես ամենքին:

Եւ քաշուեց իր առանձնասենեակը: Ես այն-  
քան տիսրեցի, այնքան տիսրեցի: Մի նոր հրա-  
շալի խաղ էի նարել, այ թէ լաւ կըխաղայինք  
կօլեայի հետ: Բայց յանկարծ հայրիկս թղթեր է  
բերել իր հետ. չեմ սիրում, երբ նա թղթեր է  
բերում՝ ամբողջ երեկոյ գրում է, —և իսկի չեմ  
կարողանում նրա հետ խօսել: Ճաշին հայրիկս  
տիսրու նստել էր. Միխայլօվսան նրան  
հարցրեց. «Ինչո՞ւ չէք անուշ անում, պարզն:  
Չինի՞ թէ վատ եմ պատրաստել: Կարծես  
կարկանդակը մի փոքր այրուել է»:

—Չէ, ոչինչ, լաւ է, ասաց հայրս:

Իսկ կարկանդակը, իրաւ, որ այրուել էր,  
պնդացել անհամացել: Ես չկերայ, վեր կացայ  
գնացի, որ շնորհակալութիւն յայտնեմ հայրի-  
կիս, բայց աչքերս լցուեցին արցունքներով:

Հայրս տեսաւ, մուայլուեց:

—Ի՞նչ եղաւ:

—Հայրիկ ջան, տիսրու եմ. գնանք նէժին-  
ցեների մօտ:

Հայրս բարկացաւ:

—Չէ որ ասացի, անկարելի է: Իսկ եթէ  
դու ծւծւան, լալկան տղայ ես, հեռացիր ինձա-  
նից, և այսուհետեւ էլ ոչ մի տեղ չեմ տանի քեզ:

Ես գնացի խոհանոց Միխայլօվսայի մօտ,  
նստեցի նստարանի վրայ և լաց եղայ:

—Ա՛խ, ինչ իր ասածի երեխայ է, —ասաց  
Միխայլօվսան: Ամօթ է, ամօթ, շարունակքար-  
կացնում ես հօրդ: Նա ծառայութիւնից վերա-  
դառնում է յոգնած ու տանջուած, իսկ դու ըս-  
կում ես յամառել: Ոչ մի երեխայ այդպիսի  
բան չի անի: Ի՞նչպէս կարելի է շարունակ  
հիւր գնալ...

Ախր միւս երեխաները տանն ուրախ են՝  
նրանք մայր ունին, բոյր ու եղբայրներ ունին:  
Մօր մօտ մարդ չի տիսրի:

Եւ ես նորից լաց եղայ:

—Ա՛խ, ինչ տեսակ երեխայ ես դու, —և  
Միխայլօվսան նստեց կողքիս: Ասում ես, թէ  
«առանց մօր լաւ չէ ապրել»: Հապա ի՞նչ ա-  
նեն այն երեխաները, որոնք ոչ հայր ունեն և  
ոչ մայր: Օ՛հ, ծանր է, ծանր, երբ երեխան բո-  
լորովին որբ է մնում, զրկուած հօրից ու մօ-  
րից: Մենակ հայրիկդ է մնացել կենդանի, դու  
իսկի չպէտք է վշտացնես նրան: Ուրախ ու  
զուարթ եղիր, որ հայրիկդ մխիթարուի: Իսկ դու  
շրթունքներդ ուոցնում ես, լաց լինում... Ա-  
մօթ է, հոգիս: Լաւ չես անում:

Միխայլօվսան դեռ էլի երկար խօսում էր  
ինձ հետ: Ես բաւական մնացի մօտը, ար-  
ցունքներս որբեցի և գնացի հայրիկիս մօտ: Նա

Նայեց ինձ ինչ որ անբաւական դէմքով, բայց  
ես ասացի.

—Հայրիկ ջան, մի՛ բարկանար, ես այլևս  
չեմ յամառի և չեմ խնդրի, որ հիւր տանես  
ինձ. Հիմա կարող եմ մօտդ նստել: Ես հան-  
գիստ ու լուռ կընկարեմ, չեմ խանգարի:

—Ա՛յ, այդ լաւ ասիր, ասաց հայրս, ապա  
թէ ոչ այն ինչ ծւծւոց էր, որ գցեցիր, կար-  
ծես փոքր երեխայ լինիս: Եթէ դու հանգիստ  
կընստես—նստիր. միայն ինձ մի խանգարիր՝  
տես, ինչքան բան ունեմ այսօր գրելու:

Նստեցի նրա սեղանի մօտ ծայրից և ըսկը-  
սեցի նկարել երկծայր մատիտով՝ կարմիրով  
ու կապոյտով: Մի տնակ շատ լաւ դուրս ե-  
կաւ, դոնով, երդկով, փեղկերով, տնակը և պա-  
րիսպը կարմիր էին, նրանց մօտ բննում  
էր մի ծառ, ափսնս, կանաչ մատիտ չունէի, ըս-  
տիպւած էի կապոյտով նախշել, բայց, այնու-  
ամենայնիւ, լաւ դուրս եկաւ: Ճայեակները  
ես արդէն չգիտէի, ինչպէս նկարեմ—կարմիր  
թէ կապոյտ. վերջապէս, նկարեցի այսպէս էր,  
այնպէս էլ՝ մի հատ կապոյտ ճայեակ է թոչում,  
մի հատ կարմիր, մէկը կապոյտ, միւսը կար-  
միր... Ուզեցի հայրիկիս ցոյց տամ, բայց նա նըս-  
տած էր լուրջ, շատ լուրջ և շարունակ գրում էր  
հա գրում: Չէ, ասացի, աւելի լաւ է շխանգարեմ:

Պէտք է պահեմ այս պատկերը, Կօլեային

ցոյց տամ: Ես կարծում եմ, նա չի կարող այս-  
պէս նկարել. Արդեօք ի՞նչ կասի նրա մայրը,  
երբ պատկերս տեսնի: Անուշտ կըգովի:

Ուհա... շարունակ գրում է հայրիկս: Շոգե-  
նաւ էլ նկարեցի, բայց մի քիչ ծուռը դուրս ե-  
կաւ. այդ տեսակ նաւը որ գետի վրայ թող-  
նենք, իսկոյն ջրով կըլցուի:

Միթէ հայրիկս չի ձանձրանում գրելուց:  
Ինձ նոյն իսկ նկարելը ձանձրոյթ պատճառեց:

—Հայրիկ, միթէ չյոգնեցիր դու,—հարցրի  
ես կամացուկ:

—Չէ, սպասիր, ես շուտով կըվերջացնեմ:

Սկսեցի պատկերներ նայել: Մի պատկե-  
րից բան չհասկացայ՝ թոչում է մի ինչ որ  
մեծ թոչուն և կտուցով գառնուկ է տանում...

Միթէ կան այնպիսի թոչուններ, որոնք կա-  
րող են գառներ թոցնել: Կամ գուցէ դա հէ-  
քեաթ է, հէնց այնպէս նկարած: Այ Կօլեայի  
մայրը կըպատմէր՝ նա ամեն բան գիտէ, ամեն  
բան, նրա հետ բաշղցը է պատկերներ տես-  
նել: Ամբողջ գրքոյկը թերթեցի, բայց հայ-  
րիկս դեռ էլի չի վերջացրել: Գնացի Միխայլօվ-  
նայի մօտ: Նա քնել է գուլպան ձեռքին, և փի-  
սօն նրա կծիկը սեղանի տակ այնպէս է խառ-  
նել, խճճել, որ ինչ ասեմ. հագիւ հաղ կարո-  
ղացայ բաց անել, ուղղել: Յետոյ դուրս եկայ  
սեղանի տակից, մի քիչ խաղացի փիսիկի հետ

և կրկին գնացի հայրիկիս մօտ:

Գրում է... չէ, ահա, վերջապէս, պրծաւ.  
զրիչը ցած դրեց: Ես վազեցի նրա մօտ:  
նա ինձ նստեցրեց իր ծնկներին:

—Հ՞ր, ի՞նչ կասես, Բօրկա,—հարցնում է,—  
քնելու ժամանակ է թէ չէ:

—Ո՞չ, հայրիկ, ես քեզ հետ մի քիչ էլի կը-  
նստեմ. ձանձրացայ սպասելուց, երբ դու  
զրում էիր: Ինչո՞ւ այդքան շատ ես զրում  
դու: Միթէ չես ձանձրանում:

—Ձանձրանում եմ թէ չեմ ձանձրա-  
նում,—ասում է նա (ու շատ տխուր է, երե-  
ւի, ձանձրացել է),—բայց և այնպէս պէտք է  
զրեմ, քանի որ գործ կայ: Իսկ դու ի՞նչ ես ա-  
նում: Միշտ տխուր ես, չես կարողանում մե-  
նակ զրադուել:

—Մենակ տխուր է, հայրիկ:

Հայրս յօնքերը մի քիչ կիսեց:

—Այ, մէկ կամ երկու տարուց յետոյ,—  
ասում է,—ես քեզ ուսումնարան կըտամ. այն-  
տեղ դու ընկերներ կունենաս, նրանց մէջ դու  
ուրախ կըլինես,—և հայրիկս սկսեց պատմել ու-  
սումնարանի մասին, թէ ինքը ինչպէս էր սո-  
վորում:

—Բօրկա, կուզես ուսումնարան գնալ:

—Այս, ուզում եմ,—ասացի ես: Միայն  
դու ինձ չասացիր, թէ տանն ինչ են անում

ուսումնարան գնացող երեխաները:

—Առաջ պատրաստում են իրենց գասերը,  
յետոյ խաղում են:

—Իսկ ես նում հետ պէտք է խաղամ: Զէ  
որ մեր տանը չկայ մի այնպիսի մարդ, որի հետ  
կարելի լինէր խաղալ:

—Դէ՞հ, ի՞նչ կայ որ, մինչև ճաշ ուսում-  
նարանում կըլինես, երեկոյեան կարող ես և մե-  
նակ խաղալ կամ պարապել: Սակայն, նայի՛ր,  
իննից անց է, ժամանակ է քնելու, տղաս, իսկ  
ես կերթամ մի քիչ զբօնելու՝ գլուխս ինչ որ  
ցաւում է, երեկի պարապմունքներիցս է: Ահա  
շուտով կրգան ծննդեան տօները այն ժամանակ  
աւելի յաճախ կերթանք Նէժինցևների մօտ: Մի-  
այն այնտեղ չարութիւն չանես, Բօրեա, թէ չէ  
դու և կօլեան ամենքին կըձանձրացնէք, այն-  
պէս որ էլ չենք կարողանայ շուտ շուտ գնալ:

—Ո՞չ, ես ոչինչ չեմ անի, հայրիկ:

—Ուրեմն, պառկիր,—հայրս տարաւ ինձ  
ննջարան,—ցտեսութիւն առայժմ:

Նա համբուրեց ինձ և գուրս գնաց, իսկ ես  
երկար ժամանակ չկարողացա քնել. մըտա-  
ծում էի՝ թէ ինչու այսօր այդքան տխուր էր  
հայրիկս, թէ ինչու մեծերն այդչափ շատ են  
զրում, թէ ինչպէս կըխաղանք կօլեայի հետ  
միասին ծննդին, և ինչպէս Միխայլօվնան ա-  
սում է, որ հայրիկս էլ տխրում է առանց մայ-

ըիկի, և ինչ լաւ կը լինէր, եթէ մայրիկս կենդանի լինէր, և էլի շատ ու շատ բաների մասին մտածում էի ես... Եւյանկարծ ինձթուաց, որ մէկը թռչում է մօտս, ամբողջովին սպիտակ, և նստում է անկողնիս վրայ, մօտիկ, շատ մօտիկ ինձանից... և որ դա մայրիկս է... Եւ ես շատ լաւ էի զգում ինձ: Ու իսկոյն և եթ քնեցի...

## II

Շուտով կանցնի ձմեռը, հիմա փետրուարն է՝ ձմրան վերջին ամիսը: Շուտով գարունը կը գայ: Ի՞նչպէս ուրախ եմ ես: Հայրիկս ասում էր երեկ, որ գուցէ ամարանոց գնանք, այնտեղ կը լողանանք, ձուկ կը որսանք... Հայրիկս արձակուրդ կը ստանայ, չի գնայ ծառայութեան: Ի՞նչ լաւ է: Երեկ ուրախ էր հայրիկս՝ խաղում էր ինձ հետ, չարչարում, քաշքում էր: Այժմ նա այլս թղթեր չի բերում ծառայութիւնից, և ուրախ է զգում իրեն: Իսկ ժամի իննին, երբ ես նստեցի ընթրելու, նա համբուրեց ինձ ու հիւր գնաց: Այսօր ես վաղ վեր կացայ և Միխայլօվիայի հետ գնացի շուկայ: Ի՞նչ տաք է այսօր, տանիքներից կաթկթում է, ջրի

գրեր են կանգնած փողոցում... Շնւտով, շնւտով կը ացուի գալունը:

Ա՛խ, ինչ կամաց-կամաց է ման գալիս Միխայլօվնան: Ոտ առ ոտ, ծանր ու բարակ... Այդպէս էլ մանգալ կը լինի՞ց: Վազում եմ առաջ, յետոյ նորից ետ գառնում նրա մօտ, ապա կրկին առաջ վազում, նստում մի քարի վրայ և սպասում...

—Գնանք, էլի, Միխայլօվնա:

—Սպասիր, ջանիկս, ախը չէ՞ ոտքերս թուլացել են: Տես, ինչ ժիր ես դառել դու, ես ի՞նչպէս կարող եմ քեզ հասնել:

Մի անկիւնում երկար նստեցի, նայում էի, ինչպէս երեխաները սահում էին սառցէ սարից: Իսկ Կոլեայի սարը փչացած կը լինի ինարկէ: Նա այնպէս հալուել է, որ անհնարէ սահել: Է՞ն, ինչ կայ որ: Գարունքին աւելի լաւ է՝ կարելի է աւելի շատ խաղեր սարքել: Էլի չկարողացաւ ինձ հասնել Միխայլօվնան: Ա՛խ, ինչպէս է գալիս: Իսկ մինչև շուկան գեռ հեռու է. եթէ այսպէս գնանք, շուտ չենք կարող տեղ հասնել:

—Միխայլօվնա:

Այ քեզ բան, բոլորովին կանգ առաւ, ինչ որ ծանօթի հանդիպեց: Ա՛խ, ես չեմ սիրում, երբ նա պատահում էր իր ծանօթներին: Խօսում են, խօսում անվերջ: Հայրս էլ չի սիրում, երբ մենք Միխայլօվնայի հետ մնում ենք փո-

ղոցում: Սկսեցի համարել մօտովս անցնողներին, տասներկու մարդ համարեցի, և էլի մի կին անցաւ երկու երեխաներով, ահա միտղայ էլ վագում է... Իսկ նրանք դեռ կանգնած են: Եւ այդ ի՞նչ բանի մասին են խօսում այդքան երկար ժամանակ: Մօտեցայ նրանց, կարծելով, որ Միխայլօվնան կըյիշի ինձ և մնաս բարով կասի իր ծանօթին: Բայց չէ, շարունակում են խօսել: Նստեցի մի ուրիշ բարի վրայ:

—Իհարկէ, ասում է Միխայլօվնան,—առանց տանտիկնոջ, հասկանալի է, որ տունը տուն չէ: Իսկ ես արդէն ուզում եմ հանգըստանալ, ես արդէն ասել եմ պարոնին. ուժից, հալից ընկել եմ, մանաւանդ տանջում են ուղերս...

Ա՛խ, Միխայլօվնան որ իր ցաւերի մասին պատմել սկսի, երկա՛ր, շա՛տ երկար կըքաշի...

Սակայն հողը մի քիչ երևացել է, այ, այստեղ տրօտուարի մօտ, որտեղ որ մաքրել են: Փայտի կտոր վերցրի և սկսեցի ձիւնը փորփորել: Այստեղ կարելի է փորբիկ պարտէղ շինել, ինչպէս անցեալ ամառը շինում էի... Էլի խօսում են:

—Բայց պարոնը այնպիսի մարդ է, որ ի՞նչ ասեմ, զբանից լաւը գժուար թէ գտնուի:—Միխայլօվնան միշտ զովում է հօրս:—Արդէն բա-

նի ժամանակ է, ինչ ես նրա մօտ ծառայում եմ և ոչ միայն երբէք չի հայհոյել, այլ նոյնիսկ չի բարկացել վրաս:

Երկուսն էլ նայեցին ինձ:

—Բօրենկան լաւ, բարի տղայ է:

Այս ի՞նչ բան է, Միխայլօվնան ինձ էլ գովում է: Իսկ տանը շարունակ վինթվինթում է, որ ես չեմ կարողանում մի որևէ բանով զբաղուել:

—Միխայն միշտ գանգատում է, որ տխուր է, ձանձրանում է: «Ա՛յ, ասում է, եթէ ես մայրիկ ունենայի, ուրախ կըլինէի: Վատ է,—ասում է,—առանց մայրիկի ապրել»:

Ա՛խ, ինչ վատն է Միխայլօվնան: Ոչինչ չի կարելի նրան ասել. ինչո՞ւ սկսեց փողոցում պատմել իմ մասին: Այսուհետեւ էլ ոչ մի անգամ չեմ դուրս գայ նրա հետ:

—Միխայլօվնա, գնանք: Ի՞նչ ես կանգնել փողոցում: Հայրս չի թոյլ տալիս ինձ փողոցում կանգնել:

—Գալիս եմ, գալիս հոգեակս:

Շարժուեց, կինն էլ նրա ետեկից, չի հեռանում:

«Ի՞նչ է,—հարցնում է,—առանց մայրիկի տխրո՞ւմ ես, պարո՞ն»:

Ես գնում եմ, լուռ եմ:

—Ոչինչ, մի ախրէք,—ասում է,—Աստուծով դուք շուտով նոր մայրիկ կունենաք:



Նայեցի նրան, զարմացայ՝ ի՞նչպէս թէ նոր մայրիկ, մտածում եմ. իսկ նրանք ժպտում են և աշքով են անում իրար. Ոչինչ չեմ հասկանում, ճշմարիտ, ոչինչ չեմ հասկանում, երկի ծիծաղում են վրաս: Ես կրկին շուռ եկայ:

—Մի՞թէ չէք հաւատում: Ազնիւ խօսք: Եւ Աստուած ձեզ լաւ, սիրող ու փայփայող մայրիկ կը տայ. Ես վաղուց նրանց ճանաչում եմ, ամբողջ հինգ տարի ապրել եմ նրանց մօտ: Ծառաների հետ քաղաքավարի է, հպարտ չէ և սիրում է երեխաներին: Հերու նրանց մօտ հիւր եկաւ ամուսնացած քոյրը, և նա մօրից աւելի շատ էր նայում իւր քրոջ որդիներին՝ խաղում էր նրանց հետ, հէքեաթներ էր պատմում. մի խօսքով երեխաները չէին ուզում նրանից բաժանուել:

«Խաղում էր, հէքեաթներ էր պատմում, ի՞նչ լաւն է... և նա մայրի՞կս պիտի դառնայ... Զէ, նա, երկի, դիտմամբ է այդ ասում»:

—Սակայն, ցաեսութիւն, Միխայլօվնա, այ թէ շատ խօսեցի ես քեզ հետ, եթէ զիւղ գնալու լինես, չմոռանաս, անցիր ինձ մօտ մնաս բարով ասելու:

—Կըզամ, Սաւելինա, կըզամ անպատճառ: Մնաս բարով:

—Միխայլօվնա, այդ ի՞նչ էր ասում նա: Մի՞թէ մարդ կարող է նոր մայր ունենալ:

—Իհարկէ, կարող է, հոգիս: Եթէ հայրիկդ ամուսնանայ, դու նոր մայր կունենաս, իսկ Սաւելինան զուր չի խօսիլ, նա այնպիսի կին չէ: Պէտք է ասել, որ նա շատ լաւ է ճանաչում նրանց, երկար ժամանակ ապրել է նըրանց մօտ, հէնց հիմա էլ յաճախ լինում է այնտեղ, իր աղջիկն էլ նրանց համար շուրեք է կարում:

—Բայց ինչու հայրիկս ոչինչ չի ասել ինձ:

—Զի՞ ասել: Երկի դեռ ժամանակը չի եկել, դրա համար էլ բան չի ասել: Ժամանակին կասի: Ես էլ ոչինչ չգիտէի: Սաւելինան հարցրեց. «Ճի՞շտ, բան չես իմացել»: —Ախր, մրտեղից պիտի իմանամ: Ու՞ր եմ գնում, որ ինչ իմանամ: Մօտս էլ ոչ ոք չի գալիս...

—Եւ նա ինձ հետ կըզբօսնի, կըխաղայ:

—Այն, նա բարի է, սիրալիր է, —ասում էր Սաւելինան: Տայ Աստուած: Հայրիկիդ հէնց այդպիսի մէկն է պէտք, որ բարի ու լաւ լինի իրեն պէս: Ես վաղուց արդէն ասում եմ — թող Աստուած նրան տայ լաւ կին, քեզ՝ բարի մայր: Իսկ ես վաղուց ուզում էի գնալ հանգստանալու, բայց միայն խղճում էի ձեզ, — ի՞նչպէս կարող էիք մենակ ապրել... ով պէտք է նայէր քեզ, ով պէտք է կառավարէր տունը: Ես թէս պառաւել եմ, բայց և այնպէս...

—Մի՞թէ դու կըզնաս, Միխայլօվնա:

— Ապա ի՞նչ։ Պարաշան էլ վաղուց կան-  
չում է... Զգնամ ինչ է։

— Լաւ կըլինի, որ չգնաս, Միխայլօվնա։  
Մնա դու մեղ մօտ, թող Պարաշան գայ մօտդ—  
մենք բոլորս միասին կապրենք։

— Ախ, ջանիկս։ Ախ, գառնուկս։ Ես ինքս  
ցաւում եմ ձեզ համար։ Ընտելացել եմ ձեզ...  
Բայց կաց. մսավաճառների շարքը քիչ մնաց  
անցնէինք։ Այս կողմը, այս կողմը գնանք,  
հոգիս։

Շուկայից մենք կառով վերադարձանք  
տուն։

— Իսկ ես գիտեմ, թէ որտեղ է ապրումքո-  
նոր մայրիկը, ասաց ինձ Միխայլօվնան։ — Այս  
փողոցով, այ չամբարձման փողոցով կանց-  
նենք նրանց կողմը։ Նրանք սեփական տներ ու-  
նեն, նրա հանգուցեալ հայրն է գնել՝ ինձ ցոյց  
են տուել։ Այս սա է, քարաշէն տան կողքին, գե-  
ղին տունը, փոքրիկ պատշգամբով և պարտէ-  
զով։ Լաւ տուն է։

Ինձ էլ շատ դուր եկաւ նոր մայրիկիս  
տունը՝ այնպէս գեղեցիկ է, մաքուր, պատու-  
հանները մեծ են, լուսաւոր, ինչպէս փայլում  
են արևից, կարծես ժպտում են ինձ, կարծես  
ուզում են ասել. «Այս, այստեղ է ապրում նոր  
մայրիկդ։ Այս, լաւ կապրես դու նրա մօտ»։

## III

Նոր մայրիկ։ Նոր մայրիկ։ Ի՞նչքան լաւ է,  
ինչքան հրաշալի է։ Իսկ ես առաջ նոյն իսկ  
մտքովս չէի կարող անցկանցնել. չէ՞ որ չըգի-  
տէի, թէ կարող է լինել նոր մայր։ Ախ, որ-  
քան ուրախ եմ ես, որքան ուրախ...

Ուղղակի սկսեցի ուրախութիւնիցս չա-  
րութիւն անել, վազվզում էի սենեակների միջով,  
երգում էի բարձր, բարձր. թոշում էի նստա-  
րանի վրայով, պարում, թոշկոտում էի...

Յետոյ յոգնեցի, քաղցեցի և գնացի խոհա-  
նոց։ Միխայլօվսան տուաւ ինձ երեկուայ կաթ-  
նապուրը։

— Միխայլօվսա, նոր մայրիկը կըվազվզի ար-  
գեօք հետս։

— Այդ ի՞նչ ես ասում, ի՞նչպէս թէ կը-  
վազվզի։ Յիմարացել ես դու, պարսն, բոլորո-  
վին յիմարացել ես։ Ի՞նչ է, նա փոքր երեխայ  
է, ի՞նչ է։ Կըտեսնի որ դու այդպէս չար ես,  
և նոյնիսկ չի ուզենայ քեզ մայր լինել։ Այս  
ինչ տեսակ երեխայ է, շուկայ էինք գնում (մօ-

տիկ հօ չէ) վազում էր անդադար. տուն վերադարձանք, կրկին թռչկոտում է: Այդ ի՞նչ սովորութիւն է անդադար թռչկոտել...

—Ուրախութիւնիցս է, Միխայլօվսա, ուրախութիւնիցս: Էհ լաւ, էլ չեմ անի...

—Ուրախութիւնից: Դարձեալ մի որևէ բան կը կոտրես, այն ժամանակ լաւ կուրախանաս: Երեկ ամեն ինչ տակն ու վրայ ես արել այնտեղ, աթոռներն այս ու այն կողմ ես թափթփել, նորից պէտք է հաւաքել...

—Ես կերթամ, այս ըոպէիս կը հաւաքեմ: Բայց, գուցէ, նա մեզ մօտ գայ, Միխայլօվնա:

—Ով գիտէ, կարող է պատահել, իսկ դու սենեակներում ի՞նչ ասես որ չես արել: Փոքը երեխայ հօ չես:

Ես վազեցի հաւաքելու: Յանկարծ կը բարկանայ և չի ուզենայ ինձ մայր լինել... Զէ, ես ինձ լաւ կը պահեմ:

Ամեն բան կարգի բերի՝ խաղալիքներս այնպէս կարգով դարսեցի, ուղղակի կը հիանաս, աթոռները դրի իրենց տեղերը, հայրիկիս աթոռի թողը սրբեցի: Կարծում եմ, ամեն բան կարգին է...

Կանչեցի Միխայլօվսային, ցոյց տուի, գովեց: Կը գայ արդեօք նոր մայրիկս, թէ չէ: Ի՞նչ որ տիկին անցաւ մեր կողմը: Վազեցի պատուհանի մօտ: Ո՞չ, անցաւ գնաց: Նա չէ, ուրեմն: Բայց ի՞նչ-

ալիսի կին է նոր մայրիկս: Արդեօք կօլեայի մօր նման բարձրահասակ է, սկը մազերով, սն զգեստով: Նա էլ այնպէս է պատմում արդեօք, նա էլ այնպէս է կիտում յօնքերը, երբ չարութիւն կանես: Կամ արդեօք նման է երազումս տեսածին, որ գալիս նստում էր իմ մահճակալին: Սպիտակ հագուստով է արդեօք, երկար խարտեաշ մազերով, պահապան հրեշտակի նման, որին ես տեսայ եկեղեցում:

Եւ նա էլ այնպէս է ժպտում, նա էլ այնպիսի փափռւկ ձեռքեր ունի արդեօք: Ո՞նց իմանամ, թէ ինչպիսի կին է նոր մայրիկս: Ես վազեցի խոհանոց:

—Միխայլօվսա, գիտես, թէ ինչպիսի կին է նոր մայրիկս: Նման է նա կօլեայի մօրը: Ի՞նչպիսի զգեստներ ունի նա: Բայց Միխայլօվնան բարկացած էր՝ կերակուրը բարձրացել էր թափուել:

—Ես ի՞նչ գիտեմ, ի՞նչպիսի կին է նա: Մարդ քեզ բան չպիտի ասի: զահան կը տանես քո հարցմունքներով՝ ի՞նչպիսի է, երբ կը զայ: Քեզ հետ խօսեմ, թէ ճաշը պատրաստեմ: Առաջին անգամն եմ այս տեսակ երեխայ տեսնում

—չի կարող մենակ որևէ բանով զբազուել... Ի՞նչ արած, գնացի նորից սենեակ: Միխայլօվնան բարկանում է, որ չեմ կարողաց: Մի որևէ բանով զբազուել: Բայց ի՞նչնում մի որևէ բանով զբազուել:

պէս զբաղուեմ։ Ես ուզում եմ նոր մայրիկիս  
մասին մտածել, թէ ինչպիսի կին է նա։ Ապա  
ի՞նչպէս իմանամ։ Հայրիկս կասի՞ արդեօք։ Սա-  
կայն դեռ ժամի երկուան է գնում միայն, — նա  
դեռ շուտ չի գայ։ Ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ... ի՞նչ...

Ինչքան ոյժ կար ոտքերումս, վագեցի  
հայրիկիս դիմաւորելու։ Նա ցնցուեց։

— Այս ի՞նչքան է, ի՞նչ ես այդպէս վազ տալիս։  
Վախեցրիր, կարծեցի, թէ բան է պատահել։

Յօնքերը խոժոռուած էին, նա ուղղակի գը-  
նաց առանձնասենեակը, և ես շհամարձակուեցի  
հարցնել մայրիկի մասին։ Ճաշին մի ինչոր  
մարդ եկաւ հայրիկի յետեկց գործով։ Հայրիկս  
շտապ շտապ էր ճաշում...

— Քնա, մի քիչ զրօնիր տան առջեր,  
Բօրեա, ես թէյին կըվերադառնամ։

Եւ գնաց։ Մնացի նորից մենակ։ Իսկ մայ-  
րիկի մասին ոչինչ չասեց։ Ուհ, այս ձանձրոյթը։  
Ի՞նչ անեմ ես։ Միխայլօվսան հիմա, երկի, կը-  
պառկի քնելու։ Նա յոզնել է շուկայից յետոյ։  
Ես հագնուեցի և դուրս եկայ զրօնելու։ Բայց  
տիսրեցի մենակ։ Ման եկայ, ման եկայ, նստեցի  
նստարանի վրայ— ի՞նչ տիսուր եմ, երբէք այս-  
պէս չեմ եղել։ Ախ, շնուտ կունենամ, արդեօք,  
ես նոր մայրիկ։ Ախ երնեկ ի՞նչպիսի կին է նա։  
Եւ յանկարծ մտածեցի։ «Զէ՞ որ ես զի-

տեմ, որտեղ է բնակւում նա։ Կերթամ Համ-  
բարձման փողոցը, այն տունը, կասեմ նրան, որ  
շուտով գայ մեզ մօտ, որ ես տիսուր եմ մենակ...»

Եւ գնացի։ Գնում էի արագ, բայց լաւ,  
ինչպէս մեծերը՝ չարութիւն չէի անում, չէի վագ-  
վզում, չէի կանգառնում։ Փողոցի մի ափից միւս  
ափը անցնում էի զգուշութեամբ, մի անգամ մի-  
այն քիչ մնաց ձիու տակն ընկնէի, բայց վազ տուի  
և կարողացայ ազատուել. մի անգամ էլ կրկնակօ-  
շիկը յանկարծ լցուեց ջրով, — ձիւնը բոլորովին  
հալւում է՝ շնուտով, շնուտով կըբացուի գարունը։

Ճանապարհը լաւ գիտեմ՝ ըանի՛ անգամ  
Միխայլօվսայի հետ միասին անցել ենք այս  
փողոցով շուկայ գնալիս։ Միայն մենք միշտ  
շուռ էինք գալիս դէպի նիկոլաևսկի փո-  
ղոցը, իսկ կառապանը այսօր գնաց ուղիղ, — այ,  
այն սպիտակ տան մօտ շուռ եկաւ, իսկ այն-  
տեղից մի քիչ որ ծոռւես դուրս կըգաս Համարձ-  
ման փողոցը։

Բայց և այնպէս հեռու է ապրում նոր մայ-  
րիկս, աւելի հեռու, քան Կոլեայի մայրը։ Սա-  
կայն ոչինչ, շուտով կըհասնեմ։ Ահա երկում  
է և այն եկեղեցին, որի մօտից անցանք, ահա  
և երկար պարիսպը։ Հէնց այստեղ պէտք  
է շուռ գալ։ Բայց նրտեղ է մայրիկիս տունը։

Նա այնպէս ուրախ տուն էր. պայծառ պա-  
տուհանները ի՞նչպէս պսպղում էին, իսկ այժմ

ոչինչ չի երեռւմ: Այս այս դեղին տունը նման  
է՝ սրա առջևն էլ ծառ կայ...

Ախ, այս ինչ է պատահել ինձ: Հէնց սա  
է. միայն այն ժամանակ արեք լուսաւորում  
էր, և նա պայծառ էր երեռւմ, իսկ հիմա արեն  
անցել է, —սա է, ինարկէ, սա է: Ահա և պա-  
տուհանի վարագոյրները, ահա և ծաղիկները:  
Նայեցի, պատուհանում ոչ ոք չի երեռւմ, միւ-  
սում, նոյնպէս: Ի՞նչ անեմ այժմ: Քաշեմ զան-  
գը: Մօտեցայ դռանը: Զէ, կարող են բարկա-  
նալ, գուցէ քնած են ճաշից յետոյ նէժինցե-  
ների պէս: Աւելի լաւ է սպասեմ, մի քիչ  
կընստեմ դռանը, կընանգստանամ: Ոչ ոք չի գա-  
լիս, ցրտում է, և մութն ընկնում, երեկոն մօտ  
է: Կամացուկ կըքաշեմ զանգը: Կամաց զանգա-  
հարեցի:

Մէկը գալիս է... Կըբարկանան վրաս, թէ չէ:  
Մի ինչ որ կին բաց արաւ. Ոչ, բարկացած  
չէ—բարի է:

— Այդ գուշը տուիք զանգը,—հարցնում է:  
Ո՞ւմ հետ էք եկել դուք, ումն էք ուզում...

Զարմացաւ, որ մենակ էի եկել:

— Ես եկել եմ նոր մայրիկիս մօտ,—նա  
այստեղ է ապրում:

Կինն աւելի ևս զարմացաւ:

— Ի՞նչ էք ասում, սիրելիս, սխալուել էք

հաւանօրէն: Ո՞րտեղ է ձեր տունը, ասացէք, եւ  
կրտանեմ:

— Ի՞նչպէսթէ սխալուել եմ: Ես գալիս եմ մեր  
տնից նոր մայրիկիս մօտ. հասկացաք, նոր մայրի-  
կիս մօտ: Թողէք ինձ, կուզեմ միայն երկու խօսք  
ասել նրան:

Կինը ոչինչ չէր հասկանում:

— Ո՞ւմ գաւակն էք գուք:

— Բօրեա Բուտկօվսկին եմ ես—թողէք,  
մտնեմ: — Ես ետ մղեցի նրա ձեռքը և մտայ  
նախասենեակ:

— Դուք Գրիգորիյ Ալեքսէնիչի որդին չէք  
արդեօք:

— Իհարկէ, Գրիգորիյ Ալեքսէնիչի որդին եմ,  
ախր ասացի, որ եկել եմ նոր մայրիկիս մօտ:

— Է, լաւ, գնանք:

— Վերջապէս հասկացաւ. Առաջ անցանք.  
Նա ներս նայեց մի դռնից և կամաց կանչեց:

— Անտօնինանիկոլաևնա, համեցէք այստեղ:  
Ես լսեցի թեթև ու արագ քայլերի ձայն, և  
ահա դուրս եկաւ նա, նոր մայրիկս: Իսկոյն  
ճանաչեցի, որ նա էր, թէկ ամենկին նման չէր  
աչ կոլեայի մօրը, ոչ էլ երազումս տեսածին...  
Բոլորովին, բոլորովին ուրիշն էր, բայց այն-  
քան լաւն էր, այնպիսի բարի աչքերով: Վա-  
զեցի մօտը:

— Իմ նոր մայրիկ: Դուք իմ նոր մայրիկն

էք, այնպէս չէ։ Ի՞նչու չէք գալիս մեղ մօտ։  
Եկէք շուտով, բոլորովին եկէք,—ես մենակ  
տիրում եմ։

Նա զարմացած, մեծ-մեծ աչքերով նայեց  
ինձներս բերող կնոջը՝ նա էլքան չէք հասկանում։

— Գրիգորիյ Ալեքսէկիչի որդին է, — ասաց  
կինը։

Այն ժամանակ նոր մայրիկս ժպտաց, ձեռ-  
քը բռնեց

— Այդ դժու ես, Բօ՛րեա։ Ո՞ւմ հետ եկար  
դու։ Ո՞վ ասեց քեզ։ Մէնակ… Միթէ… Բայց,  
գնանք, գնանք լոյսի մօտ, ես ուզում եմ տես-  
նել, ի՞նչպիսի տղայ ես դու։

Նա բարձրացրեց ինձ և կանգնեցրեց բազ-  
մոցի վրայ։

— Ես լաւ տղայ կըդառնամ, չեմ յա-  
մառի, չեմ թռչկոտի սենեակէ սենեակ և  
անկարգութիւն չեմ անի։ Ես այսօր ամեն բան  
կարգի բերի։ Ինչու չեկաք մեղ մօտ…

— Նա շարունակ ժպտում էր, երեսս դար-  
ձնում էր դէպի լոյսը. համեց զլիարկս և սկսեց  
շփել մազերս ու ճակատս։

— Նման է Գրիգորիյ Ալեքսէկիչին, ասաց  
կինը, որը երկի, նրանց խոհարարուհին էր։

— Այն, մանաւանդ աչքերը, — նա ուշադրու-  
թեամբ և բաղցրութեամբ նայում էր ինձ։

— Վաղը անպատճառ եկէք մեղ մօտ։ Ես

եկայ ասելու, որ դուք վաղը գաք մեղ մօտ։

— Իսկ ես նայում եմ, ում տղան է։ Մէնակ,  
երկի, մոլորուել է, ասաց խոհարարուհին։

— Դու ինձ ի՞նչպէս գտար։ Քեզ ով ասաց,  
հարցնում էր նոր մայրիկս, բաց անելով վե-  
րարկուս։

— Միխայլօվսան ասաց, երբ մենք վերա-  
դառնում էինք շուկայից. «Ահա այստեղ է ապ-  
րում քո նոր մայրիկը, ասում էր, այս դեղին  
տանը…»

— Ո՞ր Միխայլօվսան։

— Այ մեր, մեր Միխայլօվսան, մեր խոհա-  
րարուհին. միթէ դուք չէք ճանաչում նրան։  
Նա այնպէս պառաւ է։ Մէնք միասին այսօր  
կառքով տուն էինք գնում շուկայից…»

— Եւ նա քեզ ասեց նոր մայրիկիդ մասին։

— Ո՞չ, նա չասեց։ Նա ինքն էլ չգիտէր… Այդ  
ասեց մեղ պատահող ծանօթ կինը, որ վան-  
դակաւոր շալ ունէր ծածկած, ցածրահասակ  
ու հաստ-հաստ մարմնով… Ճանաչում էք դուք  
նրան։

— Ո՞չ, չեմ ճանաչում. իսկ ուզում ես, որ ես  
քեզ մայր լինիմ, Բօ՛րեա։

— Այ, թէ ինչ, այ թէ ինչ, բացականչեցի  
ես, վախթաթուեցի նրան ու սեղմեցի պինդ-  
պինդ։ — Ես տիրում եմ առանց մայրիկի, շնոր-  
եկէք, շնոր…»

Նա ծիծաղում էր:  
 —Թնդ, թնդ, ախ, ինչ ուժով ես դու:  
 —Ինչ է: Ո՞վ է, Տօնեա, —և մի պառաւ, որ  
 նման էր տատիս, ներս մտաւ սենեակը: Այտի  
 վրայ նա կարմիր բիծ ունէր, մազերը դուրս էին  
 թափուել թաշկինակի տակից: Նա, երեխ, ընել  
 էր ճաշից յետոյ:

—Ա՛խ, մայրիկ, սա Գրիգորիյ Ալեքսէկիչի  
 Բօրեանէ: Երեակայեցէր, մեն-մենակ եկել է ինձ  
 հետ ծանօթանալու:

Ես բարեեցի տատիկին:

—Մենակ... Այդ ի՞նչպէս թողեց քեզ հայրիկդ  
 մեն-մենակ:

—Հայրիկս գնաց: Ես զքօնում էի մենակ,  
 տիրեցի, եկայ ասելու նոր մայրիկին...

—Բայց քեզ ով ասեց նոր մայրիկի մասին:  
 Հայրիկդ:

—Զէ՛: Միխայլօվսայի ծանօթը պատահեց,  
 ասաց. «Իուը տիրում էր առանց մայրիկի:  
 Դէ՛հ, մի տիրէք, շուտով...»

—Ա՛խ, Տէ՛ր Աստուած, բացականչեց պա-  
 ռաւը, բազմոցը բոլորովին թրջուել է: Երեխ,  
 դրա ոտքերը թաց են, Տօնեա:

Բոլորը սկսեցին նայել ոտքերիս:

Կօշիկներիցս մէկը թաց էր և չէր հանւում:

—Ա՛խ, դու չարաճճի, —ասում էր տատիկը:  
 Ոտքերդ թաց ես արել, կըհիւանդանաս:

—Ակուլինա, բեր իմ տաք գուլպաներն ու  
 կօշիկները, իսկ սրանք պէտք է չորացներ,—  
 ասաց նոր մայրիկս:

—Միայն մէկն է թաց, միւսը չոր է, ա-  
 սացի ես:

—Սա էլ թաց է, —շօշափելով ասաց տա-  
 տիկը:

—Այս ի՞նչպէս թրջուեցիր: Գրերի մէջ էիր  
 ոտքդ կոխում:

—Չէ, ես չարութիւն չէի անում. ոտքս դրի  
 սառոյցի վրայ, կարծում էի, պինդ է, իսկ նա  
 յանկարծ—ճըրթ: Չգիտէի:

Տատիկը շարժում էր գլուխը: Մայրիկը  
 ծիծաղում էր և ինչքան ոյժ ունէր շփում էր  
 ոտքերս օղիով:

—Դէ՛հ, այժմ վազիր, —ասաց տատիկը, երբ  
 ես հագայ կօշիկները:

Բայց մայրիկի գուլպաներն ու կօշիկները  
 այնպէս մեծ էին ինձ համար, որ չէի կարո-  
 ղանում վազել. սկսեցի ման զալ սենեակի մէջ:

Լա՛ւ է նոր մայրիկիս մօտ, աւելի լաւ է  
 քան մեզ մօտ: Պատուհաններում դարսած  
 են ծաղիկներ, յատակի վրայ՝ բարձր ծառեր  
 լայն տերևներով. մի գեղին թուչնակ նստած է  
 վանդակի մէջ՝ նա քնած էր, երբ ես եկայ, բայց  
 աղմուկից զարթնեց և թրպրտաց: Մայրիկը ա-

սում է, որ նա լաւ է երգում։ Այս, ի՞նչպէս  
կուզենայի նրան լսել։

—Բայց դու, այնուամենայնիւ, շատ չարաշճ-  
ճի տղայ ես, —ասաց տատիկը, —եկել ես առանց  
թոյլտութեան։ հայրիկդ անհանգիստ կըլինիւ։

—Այս։ Ուս, ինչքան ուշ է. լապտերներն  
արդէն վառում են։ Պէտք է գնամ։ Մնաք բա-  
րով… Միայն ի՞նչպէս գնամ։ Այս կօշիկներով  
չեմ կարող։ Ո՞րտեղ են իմոնքս։

—Կօշիկներդ դեռ թաց են, Բօրեա, ասաց  
նոր մայրիկս։ Պէտք է սպասես։ Մենք այս ըո-  
պէին թէյ կըխմենք, —ահա Ակուլինան բերում  
է ինքնաեռը, —դու կըտաքանաս։ Բայց չէ  
որ շուտով այստեղ կըդայ ինքը Գրիգորիյ Ալեք-  
սէկիչը։ Չէ որ մենք այսօր թատրոն ենք գնա-  
լու, միթէ մոռացել էք, մայրիկ… Թող Բօրեան  
մայ մինչև նրա գալը։ Արդէն ժամի վեցն է։

Մենք սկսեցինք թէյ խմել։ Նոր մայրիկս  
չի կարողանում նշի կարկանդակներ պատրաս-  
տել, բայց դրա փոխարէն թխում է շատ հա-  
մեղ գաթաներ, որոնք, համարեա, ոչնչով պա-  
կաս չեն կարկանդակից։

—Իսկ ի՞նչ ես անում դու այն ժամանակ,  
երբ հայրիկդ ծառայութեան է, հարցրեց մայ-  
րիկը։ —Դու դեռ կարդալ չգիտես։

—Չէ, մի երկու տարուց յետոյ հայրիկս  
ինձ ուսումնարան պիտի տայ, իսկ այժմ ես

խաղում եմ. Միայն մենակ ձանձրանում եմ,  
չեմ կարողանում խաղալ։

—Մենք միասին կարդալ կըսովորենք, ուղում  
ես։

—Այս, և կըխաղանք։ Դուք ջրկիրներ խաղալ  
գիտէք։

—Ոչ, չգիտեմ։

—Չգիտէք… Այդ ի՞նչպէս է որ չգիտէք…  
Են, լաւ, բան չկայ, ես ձեզ կըսովորեցնեմ։  
Եկէք վաղը, ես ձեզ տակառն էլ ցոյց կըտամ։  
Դուք այ այսպէս կընստէք, իսկ ես կանցնեմ  
տակառով, կըկանչեմ. ջուր, ջուր…

Տատիկն ու մայրիկը ծիծաղում էին. նրանք,  
երկի, երբէք չէին տեսել այդպիսի խաղ։

—Այս, դու շատախօս, շատախօս, —գլուխը  
շարժելով, ասում էր տատիկը։

—Լաւ, վաղը կըսովորեմ, Բօրեա։ Իսկ այժմ  
նստիր թէյդ խմիր, բանի որ չի պաղել, —  
ասաց մայրիկը և բաժակը դրեց առջես, իսկ  
տատիկը լցրեց տաք կաթ։

—Ես ձեզ կըսովորեցնեմ խաղալ և եռա-  
ծի։ Այսպէս՝ պէտք է երեք հատ աթոռ գնել,  
սանձեր գերցնել… Է՞յ, իմ սիրուն ձիեր… իսկ  
թղթից կարող էք նաւակներ շինել։

—Կարող եմ. Մենք միասին աւելի լաւ  
բան կըպատրաստենք, ամբողջ շոգենաւ կը-  
շինենք թղթերից, —ահա այսպիսի… Նա ձեռ-

34

քով ցոյց տուաւ,—տախտակամածով, խողովակով... ուզում ես:

—Այդպիսին... ի հարկէ, ուզում եմ: Կօլեայի մայրը չի կարող այդ տեսակը պատրաստել: Ես այն ժամանակ կըկանչեմ կօլեային և միասին կըխաղանք: Դուք մեզ հետ կըխաղաք, համ: Իսկ գայլ-գայլ գիտէ՞ք խաղալ: Դա այսպէս է... Շնորհակալութիւն, տատիկ, էլ չեմ ուզում խմել: Ահա այսպէս պէտք է խաղալ, կանգնեցէք այստեղ, իսկ ես կերթամ այն սենեակը... Դուք քանի սենեակ ունիք, երեք, չորս... գնանք, մայրիկ, տեսնենք:

Դըն-դըն-դըն... յանկարծ զանգահարեցին:

—Ա՛խ, հայրիկդ է,—ասաց նոր մայրիկս: Սպասիր, Բօրեա, —նա զգուշացրեց ինձ մատով, —ես մենակ դուրս կըդնամ, իսկ դու նըստիր այս բազկաթոռի վրայ: Հէնց որ նա զահլիճ կըմտնի, իսկոյն կընկատի քեզ: Տեսնենք ի՞նչ կասի:

Նստեցի բազկաթոռի վրայ և թագնուեցի: Լսեցի, հայրիկս ներս մտաւ:

—Ի՞նչ է պատահել ձեզ, Գրիգորիյ Ալեքսէկիչ, —հարցնում է մայրիկս, և նրա ձայնը արդէն ուրախ չէ, այլ մի տեսակ լուրջ:

—Եկել եմ ձեզ ասելու, որ դուք այսօր ինձ չսպասէք թատրոն գնալու համար (այս ինչո՞ւ

այսպէս տխուր է խօսում հայրիկս): Դժբախտութիւն է եկել գլխիս...

—Ի՞նչ է պատահել, —տատիկն էլ մօտեցաւ գոանը:

—Ուղղակի չգիտեմ ի՞նչ անեմ... տղաստնից դուրս է եկել ճաշից յետոյ... Նայող չկայ...

—Ա՛խ, Տէր Աստուած, —բացականչում է մայրիկս և հայրիկիս ձեռքից բռնած ներս է քաշում դէպի դահլիճը: —Բօրեա, Բօրեա:

—Հանգստացէք, Գրիգորիյ Ալեքսէկիչ, նա այստեղ է, ախ չարաճճի, —ասում է տատիկը:

Հայրիկս ուրախացաւ ու զարմացաւ:

—Դու այստեղ ի՞նչպէս եկար, —հարցնում է: —Դո՞ւք բերիք սրան:

—Ո՛չ, ես ինքս եկայ, հայրիկ:

—Նա ինքն եկաւ... ես ցաւում եմ այժմ, որ ձեզ չնախազգուշացրի, —նոյն իսկ ժամանակ չունեցայ մտածելու...

—Սա էլ շարունակ խօսում էր փոքրիկ երեխայի պէս: Ես բանի անգամ ասացի՝ հայրիկն տնհանգիստ կըլինի, —ասեց տատիկը:

—Սա լաւն է: Ես սիրում եմ սրան: Սա ինձ համար շոգենաւ կըպատրաստի, հայրիկ, մեծ շոգենաւ...

Ես փաթաթուեցի նոր մայրիկիս և գրկեցի: Հայրիկս նայեց մեզ, ձեռքով շփեց դէմքը և ժպտաց:

— է՞ն, փառք Օստծու... Միայն չեմ հասկանում, ի՞նչպէս եկար դու այստեղ: Ես այսուայն կողմը վազեցի, գնացի Նէժինցևների մօտ, Կոստինի մօտ... Բայց, թէ դու կարողէիր այստեղ գալ մտքովս անգամ՝ չէր կարող անցնել: Ախր ի՞նչպէս իմացար:

— Մի կին պատահեց, երբ Միխայլօվնայի հետ էի, և ասաց. «Դուք տիրո՞ւմ էք առանց մայրիկի»...

— Այդ երկար պատմութիւն է, թէ ի՞նչպէս է իմացել, — և մայրիկս ծիծաղեց:

— Գրիգորիյ Ալեքսէնիչ, ես ձեզ համար թէյ եմ ածել, խմեցէք, հանգստացէք, — ասաց տատիկը: —

— Բայց նա ի՞նչպէս է գտել ճանապարհը: Զէ՞ դուք հեռու էք ապրում:

— Միխայլօվնան ցոյց տուաւ Համբարձման փողոցում դեղին տունը: Ես գիտեմ Համբարձման փողոցը: Ուզում էի միմիայն ասել, որ նոր մայրիկս շուտով գայ մեզ մօտ, հայրիկ: Ես այնպէս տիրեցի, երբ դու գնացիր...

Հայրիկս նայեց մեզ (ես կանգնած էի նոր մայրիկիս մօտ և բռնել էի նրա ձեռքը) ու աւելի ուրախ ժպտաց:

Բայց յանկարծ նրա դէմքը լուրջ կերպարնը ընդունեց, և նա ասեց.

— Նոր մայրիկ: Ո՞վ ասեց քեզ, թէ նա ըս

մայրիկը պիտի գառնայ... իսկ այժմ, երբ տեսաւ, որ դու առանց թոյլտութեան այդպէս հեռու տեղ ես գնում, իսկի չի ուզենայ քեզ պէս չարաձձիի մայրը լինել:

Ես վախեցայ: Հայրիկս ասեց լրջօրէն. տատիկը շարժում էր գլուխն ու ասում. «Այս, լաւ չէ այդպէս անել»: Մի՛թէ նա իսկապէս չի ուզենայ ինձ մայր լինել: Նայեցի, ժպտում էր...

— Ես միայն եկել էի, որ նրան մեզ մօտ կանչեմ... Ես այնպէս տիրուր էի... Միխայլօվնան պառկեց քնելու:

Մայրիկս մօտ քաշեց գլուխս և համբուրեց:

— Այսուհետեւ նա երբէք չի գնայ մենակ: Դա վճռուած բան է. այնպէս չէ, Բօրեա:

— Իհարկէ... Ախր, երբ դու մեզ մօտ կրինես, ես էլ ինչու կերթամ ուրիշ տեղ...

— Այո, մենք լաւ բարեկամներ ենք: Ես վազը կերթամ նրա մօտ. Նա ինձ ցոյց կըտայ իր խաղալիքները, մենք միասին կըխաղանք... Մի բան միայն վատ է, — ասեց նա յանկարծ ծիծաղելով և դառնալով դէպի հայրիկը — ես չգիտեմ ջրկիրներ խաղալ:

Ամենքը ծիծաղեցին: Հայրիկս մօտեցաւ և նստեց մեզ մօտ բազմոցի վրայ այնպէս ուրախ, այնպէս ուրախ, որ երբէք եղած չէր:

Ամենքից շատ ես ուրախացայ, ուրեմն ոչ

ոք չի բարկանում, ուրեմն նա ինձ մայր կը-  
լինի: Ես վեր թռայ և ծափ տուի:

—Բա՞ն չկայ, բա՞ն չկայ: Ես ձեզ կըսովո-  
րեցնեմ: Միայն դուք եկէք:

—Սակայն արդէն ժամի եօթն է,—ասաց  
տատիկը, —դուք ե՞րբ պէտք է թատրոն գնաք:  
Կարող էք ուշանալ:

—Ա՛խ, պէտք է թատրոն գնանք, —ասաց  
մայրիկս և խորը շունչ քաշեց: —Ինչ-որ էլ չեմ  
ուզում թատրոն գնալ:

—Ինչու: Զէ՞ որ ուզում էիր, Սօնիչկոն  
էլ կըսպասի ձեզ, իսկ Բօրենկան շուտով պէտք  
է քնի, ժամանակ է արդէն:

—Իհարկէ, —ասաց հայրիկս: —Ես նրան  
իսկոյն տուն կըտանեմ, կըհագնուեմ և կըգամ  
ձեր ետևից: Պատրաստուիր, Բօրեա, ժամանակ  
է տուն գնալու: Միխայլօվսան այնտեղ անհան-  
գիստ է քո պատճառով, խեղճ կին:

Զէի ուզում, բայց ինչ անէի. հագայ կօշիկ-  
նես, համբուրեցի մայրիկիս ու տատիկին և  
սկսեցի հագնուել:

—Ուրեմն եկ մեզ մօտ վաղը, երբ հայրի-  
կըս ծառայութեան կերթայ՝ կըգմա:

—Կըգամ, կըգամ, —ասում էր մայրիկս,  
օգնելով ինձ հագնուել:

—Ահա թէ ինչ կանեմ ես՝ կըգամ մօտի,  
միասին կըխաղանք, յետոյ կերթանք զբօսնելու,

իսկ ճաշին կըգանք այստեղ. հայրիկդ էլ ծառա-  
յութիւնից ուղղակի կըգայ մեզ մօտ, լաւ:

Ես վեր թռայ բարձր, թէկ կրկնակօշիկնե-  
րով էի: Հայրիկս ժպտալով ման էր գալիս սե-  
նեակում և որոնում էր իր գլխարկը:

—Դուք էլ եկէք, տատիկ, ես ձեզ ցոյց կը-  
տամ մեր սենեակները:

—Լաւ, լաւ, Բօրենկա, —ասում էր տատի-  
կը, —միայն տաք հագնուիր, եթէ մըսես, չեմ  
գայ: Ակուլինա, տուը իմ մեծ շալլ:

Մայրիկս չոքած կոճկում էր վերարկուս  
և փաթաթում էր ինձ տաք շալի մէջ:

—Չեմ մըսի, չեմ մըսի, տառմ էի ես:

—Պէտք է աւելի տաք հագնուել, Բօրեչկա,  
ոտքերդ թաց են, դուք կառրով էք գնալու, ե-  
թէ հիւանդանաս, մտածիր ինչքան վատ կըլի-  
նի՝ չենք կարող զբօսնել, խաղալ:

—Ո՛չ, —ասացի ես, —չեմ մըսի: Բայց նա  
փաթաթեց դէմքս, այնպէս որ ամենեին չէի  
կարողանում խօսել:

Եւ նա և հայրիկս ծիծաղեցին:

—Ել մի խօսիր, հոգեակս, —ասաց նա,  
համբուրելով ձեռքս: —Յտեսութիւն, վաղը կը-  
խօսենք:

—Յտեսութիւն. վաղն անպատճառ արի:  
Հայրիկիս հետ կառքի մէջ նստեցինք:


—Հայրիկ, նա շուտ կըգայ մեզ մօտ ապ-  
բելու:

—Երեխ շուտ կըգայ,, սիրելի՛ս:

—Ի՞նչպէս ուրախ եմ ես: Նա գիտէ հե-  
քեաթներ պատմել, ինձ համար շոգենաւ կը-  
պատրաստի: Ես նրան սիրում եմ:


—Լաւ, միայն հիմա շատ մի՛ խօսիր՝ քա-  
մին ուղիղ դէպի մեզ է փչում:

Հայրիկս սեղմեց ինձ կըծըին, թերով  
պաշտպանելով քամուց: Ես չէի մըսում, լա՛ւ  
էր այդպէս գնալ: Նայում էի աստղերին,  
նրանք ի՞նչպէս փայլում էին, մանաւանդ մէկը՝  
մեծը, լուսաւորը: Ես մտածում էի՛ թէ ի՞նչ-  
պէս կըխաղամ մայրիկիս հետ միասին, թէ  
ի՞նչպէս կերթամնրա մօտ լսելու դեղձանիկի  
երգը: Ես ուզում էի այս բոլորը պատմել  
Միխայլօվսային, թռչկոտել, ծիծաղել... Սա-  
կայն, քնել ես շատ էի ուզում:



### ՆՈՒԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

1 Վայրի կարապներ (սպառուած)	8
2 Առաջին վիշտ (սպառուած)	10
3 Անտառապահնը (սպառուած)	12
4 Աշխէնն եւ Մարգարիտը (սպառ.)	10
5 Աղքատի ըախտը (սպառ.)	5
6 Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7 Նելլոն ու Փատրաշը	10
8 Գիւղում (սպառ.)	20
9 Կենուանի՛ է արդեօք (սպառ.)	8
10 Բարեկամներ (սպառ.)	12
11 Առավներ ընական պատմութիւնից (սպառ.)	12
12 Մազնիս	12
13 Արջի պատմութիւնը: Գայլը	15
14 Ոզնիներ	8
15 Թմ՛փիկը (սպառ.)	12
16 Լերան աղջիկը (սպառ.)	20
17 Բուլ	12
18 Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19 Փիղ	8
20 Ռոպէնի գրադմնները	25
21 Որբ Աննան	12
22 Արցոնը	15
23 Անձնագործ մանուկ	10
24 Դարեւոր կաղնի	6
25 Խրամատի եղերքին	10
26 Լուսատաիկներ	40
27 Կատակերգութիւն զոմի ըակում	12
28 Նոր Մայրիկս	10



5548